

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Պոլիկլինիկայի էլեկտրական ցանցերի նախագիծը կատարված է ճարտարապետական գծագրերի, հարակից բաժինների առաջադրանքների, ինչպես նաև ПУЭ-ի և СП 31-110-2003 դրույթների համաձայն:

Անխափան էլեկտրամատակարարման աստիճանով պոլիկլինիկական պատկանում է 2 կարգի սպառիչների դասին:

Տվյալ նախագծի ծավալներում ընդգրկված են՝

- շենքի ներքին ուժային և լուսավորության ցանց
- գլխավոր բաշխիչ վահանը
- հարկերում տեղադրված ուժային և խմբային վահաններ

Պոլիկլինիկայի էլեկտրաէներգիայի հիմնական սպառիչներն են՝

- շենքի ներքին լուսավորությունը
- ընդհանուր օդափոխության սարքավորումները
- տեխնոլոգիական սարքավորումներ

Պահանջվող հզորությունը կազմում է 45.5 կՎտ:

Ցանցը նախագծված է հետևյալ սխեմայով՝

Ներանցումը պոլիկլինիկայի գլխավոր բաշխիչ վահան իրականացվում է ЯБ1-2У3

մուտքային սարքերի միջոցով:

Այստեղից կատարվում է էլ.էներգիայի բաշխումը ներքին ուժային և խմբային վահանակների միջև:

Էլեկտրական բեռերը գլխավոր բաշխիչ վահանից (ԳԲՎ-ից) բաշխվում են

ՈՒՎՈ -ռենտգեն կաբինետի վահան

ՈՒՎ2 -ֆլյուորոգրաֆիայի վահան

ՕՎ - օդափոխության վահան, որի մուտքային ավտոմատ անջատիչը,

կոմպլեկտավորված է անկախ խզիչով, որի միջոցով կատարվում է օդափոխության

համակարգի ավտոմատ անջատումը հրդեհի դեպքում (հրդեհային ազդանշանման վահանից):

ԼՎ1+ԼՎ7 - Հիմնական լուսավորության հարկային վահանակները:

ՎՎ1 - Վթարային և էվակուացիոն լուսավորության վահաններ:

Խմբային վահանակների սնող մագիստրալ գծերը նախագծված են ВВГнг մակնիշի

մալուխներով, անցկացրած տուփախողովակներով և վինիլալատե խողովակներով:

Խմբային ցանցերը նախագծված են պղնձե հաղորդալարերով թաքնված սվաղի շերտի տակ:

Գծերը նախատեսված են միաֆազ՝ եռալար և եռաֆազ հինգլարանի:

Վահանակները տեղադրվում են հատակից 1.5մ բարձրության վրա, ընդհանուր

նշանակության վարդակները 0.4մ անջատիչները 0.8մ բարձրության վրա :

Նախագծով ընդունված է հողանցման TN-C-S համակարգը:

Ներանցվող կաբելների PEN ջիղը բաժանվում են N (մեկուսացված) և PE ջիղերին և

վերջինս կրկնակի հողանցվում է:

Նախագծով նախատեսված է տեխնոլոգիական (աշխատանքային) հողանցում:

Տեխնոլոգիական արտաքին կոնտուրից 4x40 շերտապողպատը ներանցվում է շենք և




միանում համապատասխան կաբիներներում կամ սրահներում տեղադրված հողանցման

համար տեղադրված տուփերին:

Տեխնոլոգիական և պաշտպանիչ հողանցիչների միջև հեռավորությունը պետք է լինի 15մ-ից

ոչ պակաս:

Էլեկտրաէներգիայի տարեկան ծախսը կազմում է հազ.77.54վտ ժամ:

Ն.Գ.Ճ.	Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		ՕՐ.ԱՆՎԱՆՈՒՄԸ				
ՆԱԽԱԳԾԵՑ	Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ		ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱԲՈՒԺԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ				
			ԹԵՐԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՕՐՅԵԿՏ	04/16		
			ԲԱՑԱՏՐԱԳԻՐ	ԹԵՐԹ	ԷՏ - 2	ՓՈՒԼ	ԱԳ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒՄ				ԹԵՐԹԵՐ	18		